

Տ. ՇԱՆԷ ԱԲԵՂԱՅ ԱՆԱՆԵԱՆ

**Ի ՏԱՄՆԱՄԵԿԻ ԳԱՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԱՐԵԳՆԻ
ԵՐԿՐՈՐԻ ՆԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ**

Տէրունաւանդ հօրին ընտրեալ գլուխ բարի,
Տեսոն իրոյ օրինակին փափագ արի:

Գերագունին կամօք վերին սա ընտրեցաւ
Աստուածային անօրինութեամբ հայր համայնից:
Բոպէափայլ արեգական լուսոյ քարոզ
Եւ մարդկայնոց հոգոց պէտքից ընտրեալ տեսուչ.
Գտեալ սորա ի Փեսայէն երկնաւորի
Ինքնին անձէն զիւրս ընծայեաց՝
Նման նորին համանունին վկայողի:

Եւ ըստ սմին օրինակի
Բախարար նահապարակի
Կոչեաց զորդիս տանն Արամայ,
Բախճանական սեղան կանգնեալ
Որպէս վկայ նորոյ յոյսի
Բարունարար զմեզ յօղեաց
Դարձ առ Աստուած, առ հայրենին:

Նօրն լուսոյ էականին ընտրեալ անօթ,
Անխոնջ մշակ այգոյն հայկեան
Յուսով լցոյց զոգիս մանկանց
Բամայն Նայոց եկեղեցեաց:
Անխախտ պահեալ հարցն զսահմանս
Պարտար ամուր սա յարդարեաց,
Եւ Սրբարան Մայր Աթոռոյս
Տուիչ բարեաց վերակարգեաց:

Ամենակալ աջդ, ով Աստուած, յարախնամ
Մերայնոցս ազանց սեռից անխախտ պահեա,

Եւ բարձրացո եղջիր սորա որպէս Դաւթի սիրելոյ քոյ,
Նոր իմն առեալ միշտ յարդարեա եւ զօրացո
Աթոռ սորին ընդդէմ ալեաց յարափոփոխ ժամանակին,
Յարագուարճ աստուածային սիրով լցո
Նորին գաւաթ՝ առ ի յարբել մանկանց Սրբոյ Եկեղեցոյ:

Նայր բարեգութ, ընդ Միածնիդ եւ Սուրբ Նոգոյդ
Առաջնորդեա, իմաստնացո ծառայիս քո,
Յեռեակ շնորհաց՝ խորհուրդ անհաս Եռանձնութեանդ,
Որպէս երբեմն ընտրելոյ քաջաբարբառ Ահարովնին,
Յօղով լերանց խնկաբերաց գազաթն ի վայր յեղեալ լցո :

Եւ Քեզ՝ անհաս Երրորդութեանդ անճառելի
Տացոյք միշտ փառքս գոհութիւն անլռելի :